ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍԱԷ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
60	Գլխարկ ձմեռային ներկայացուցչական Գլխարկը բաղկացած է լաքապատ կոշտ հովհարից, կողամասերից, հատակից, մորթե ականջակալներից և մետաղի պարունակություն ունեցող ոսկեգույն թելով գործված երկհանգույց հյուսապարանից: Հովհարը սև գույնի, արտաքինից լաքապատ, իսկ ներքնամասը՝ սև գույնի թավշյա գործվածքից: Հովհարի ներսից տեղադրվում է 2-3մմ հաստության պլաստմասայե միջադիր: Հովհարի լայնությունը 5սմ: Գլխարկաբոլորքի ներքնամասում ամբողջ շրջագծով արտաքինից մշակված է 2սմ լայնության երիզ, որի վրա դիմային մասում, ականջակալների տակ եզրերից ամրացվում է հյուսապարանը՝ 14մմ տրամագծով , պլաստմասայե կոճակներով: Գլխարկը կարվում 34181 արտիկուլի կիսաբրդյա մուգ փիրուզակա¬նա¬չավուն գույնի 330 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ, 45% բրդի և 55% պոլիէսթերի բաղադրությամբ անջրանցիկ նյութով ներծծված գործվածքից և 1050-1150 գրամից ոչ պակաս մակերեսային խտությամբ մուգ մոխրագույն արհեստական մորթուց, մորթախավի բարձրությունը 10-13մմ: Գլխարկաբոլորքի արջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է մետաղական համաձուլվածքից դափնիներով, օվալաձև ոսկեգույն գլխարկանշանը (գլխարկանշան մեծ *): Գլխարկանշանը դափնիներով է , 32 ճառագայթով , կենտրոնական մասը ՀՀ եռագույն դրոշի գույների շերտագծերով՝ վրայից ոսկեգույն հնգաթև աստղ: Ներսամասը մզդակվում է 5սմ կողմերով շեղանկյունաձև 8C5BШ արտիկուլի մուգ դեղնականաչավուն աստառով: Տաքացվող ներդիրը ներսից մշակվում է ամրացվող շերտերով և 100գր. մակերեսային խտությամբ սինտեպոնով: Գլխարկաբոլորքի բարձրությունը 9-9.5սմ: Հետնամասի մորթու լայնությունը մեջտեղում՝ 8,5-9.0սմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ:

	Ականջակալների գլխարկահատակին ամրանում են սև գույնի քուղերով: Գլխարկահատակին, ականջակալների միացման տեղում համապատասխանաբար մշակվում են 4-4.5մմ տրամագծով մետաղական անցքեր: Գլխարկի ներսում աստառի վրա ճակատային մասի մեջտեղում կարվում է 5,5x5 սմ չափսի արհեստական կաշվե պաշտպանիչ շերտ: Գլխարկահատակի կենտրոնում ներսի կողմից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա նշվում է գլխարկի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը և տարեթիվը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները՝ 2%: Արտադրվում են 54-62 չափսերի: Արտաքին տեսքը՝ համաձայն ներկայացվող նմուշի: Արկղերում գլխարկները պետք է լինեն չդեֆորմացված: Փաթեթավումը՝ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 3-4 շարք, յուրաքանչյուր շարքում 4-6 հատ առանձին-առանձին: Արկղերրում գլխարկի ներսից, գլխարկաբոլորքի լայնքով տեղադրվում ստվարաթղթե օղակ, գլխարկը չճմթվելու համար: Արկղերը պիտակավորված վրան պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО САЭ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏվ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
60	